


Քննիչի հարցաքննությունը որպես պաշտպանության իրավունքի բաղադրատարր

Կոչուբաև Ալեքսանդր Ս.

Բրախյազիստության ամբիոնի հայցորդ,

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0006-2481-8175>

legaldep02@gmail.com

ՀՏԳ՝ 343.1; EDN: FYQLTW

DOI: 10.58587/18292437-2025.1-46

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ քննիչ, հարցաքննություն, մեղադրյալի պաշտպանություն, քննություն, դատավարական արատներ, պատշաճ ապացույց, ցուցմունք, վկայի հարցաքննություն, արձանագրություն, անթույլատրելի ապացույց

Допрос следователя как составляющая права на защиту

Кочубаев Александр С.

Соискатель кафедры права, Институт философии, социологии и права НАН РА (Ереван, РА)

Аннотация. Новый Уголовно-процессуальный кодекс РА (далее-кодекс) предоставил довольно широкий инструментарий для построения защиты обвиняемого, некоторые из которых являются новыми по своей сути и устанавливают диаметрально противоположные структуры, чем предыдущие правовые нормы. Одним из таких инновационных институтов является допрос должностного лица, получившего доказательства в суде. Этим постановлением законодатель положил конец многочисленным спорам, возникшим в теории и на практике по поводу того, разрешим ли допрос должностного лица, добившегося доказательства. Кодекс разрешает допрос следователя в качестве свидетеля исключительно в том случае, если оспаривается допустимость или достоверность полученных им вещественных доказательств, протокола совершенного доказательного или иного процессуального действия или внесудебного документа, и допрос необходим для разъяснения участникам производства или суду существующих вопросов о допустимости или достоверности доказательств: Несоблюдение указанного процессуального порядка может создать крайне неблагоприятную ситуацию для стороны обвинения, учитывая тот факт, что в случае очевидного нарушения процедуры получения или фиксации доказательств данные доказательства не могут быть использованы без допроса лица, которое их получило или составило.

Ключевые слова: следователь, допрос, защита обвиняемого, следствие, процессуальные нарушения, надлежащие доказательства, показания, допрос свидетеля, протоколирование, непроверяемые доказательства

Interrogation of an Investigator as a Component of the Right to Defense

Kochubaev Alexander S.

The applicant, Department of Law, Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The new Criminal Procedure Code of the Republic of Armenia (hereinafter referred to as the Code) has provided a fairly wide range of tools for building the defense of the accused, some of which are new in nature and establish diametrically opposed structures than previous legal norms. One of these innovative institutions is the interrogation of an official who has received evidence in court. By this decree, the legislator put an end to numerous disputes that arose in theory and in practice about whether the interrogation of an official who obtained evidence was allowed. The Code allows the interrogation of an investigator as a witness only if the admissibility or reliability of the material evidence obtained by him, the protocol of the committed evidentiary or other procedural action, or an extrajudicial document is disputed, and the interrogation is necessary to clarify existing issues about the admissibility or reliability of evidence to the participants in the proceedings or the court.: Failure to comply with this procedural procedure can create an extremely unfavorable situation for the prosecution, given the fact that in the event of an obvious violation of the procedure for obtaining or recording evidence, this evidence cannot be used without questioning the person who received or compiled it.

Keywords: investigator, interrogation, defense of the accused, investigation, procedural violations, proper evidence, testimony, witness interrogation, logging, irrefutable evidence

ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) մեղադրյալի պաշտպանությունը կառուցելու հարցում սովել է բավականին լայն գործիքակազմ, որոնցից

որոշները էության մեջ նոր են և տրամազծորեն հակառակ կառուցակարգեր են սահմանում, քան նախորդ իրավակարգավորումներն են:

Այսպիսի նորարարական ինստիտուտներից մեկը դատարանում ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձի հարցաքննությունն է: Այս կարգավորմամբ օրենսդիրը վերջ տվեց տեսության մեջ և պրակտիկայում առաջացած բազմաթիվ վեճերին առ այն, թե արդյոք թույլատրելի է ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձի հարցաքննությունը:

Մասնագիտական գրականության մեջ առկա են մի քանի մոտեցումներ կապված խնդրո առարկա բնագավառի վերաբերյալ: ԱՄՆ-ում մինչդատական փուլում ավանդական հետաքննություն չի անցկացվում: Ոստիկանության կողմից կազմվում են հաշվետվություններ, որոնք քրեական գործով ապացույցներ չեն համարվում: Այստեղ ընդունված պրակտիկա է ոստիկանի հարցաքննությունը դատարանում՝ նրա կողմից բացահայտված հանգամանքների վերաբերյալ՝ որպես մեղադրանքի կողմի վկա: Այս մոտեցման տեսանկյունից առաջին ձեռքից՝ կարելի է ստանալ առավել ամբողջական և հավաստի տեղեկատվություն: Վ. Կալնիցկին առաջարկում է կողմերի դատական վիճաբանություններին քննիչի մասնակցության հնարավորություն նախատեսել՝ մեղադրանքի կողմի վարկածը մեկնաբանելու համար [7, էջեր 23-25]:

Ն. Ռադուտնայան կարծում է, որ եթե, օրինակ, դեպքի վայրի զննության ժամանակ բացակայում է քննիչի ստորագրությունը, ապա այս ապացույցը լրացնելու համար քննիչը կարող է հարցաքննվել դատարանում, բայց նման դեպքերը պետք է լինեն, ավելի շուտ, բացառություն, քան կանոն [8, էջեր 139-142]:

Այս մոտեցումները կասկածի տակ է դրել Դ. Չիստիլովան, ով գտել է, որ այս դիրքորոշումը ընդունելի չէ, քանի որ միշտ չէ, որ պարզ կլինի, թե որ դեպքում է տեղի ունեցել իսկապես տեխնիկական սխալ և որ դեպքում կա քննչական գործողություն կատարելու դատավարական կարգի խախտում [10, էջեր 94-105]:

Հարցի վերաբերյալ իր դիրքորոշումներն են հայտնել նաև Ռ.Գ. Գերագույն և Սահմանադրական դատարանները: Այսպես՝ Ռ.Գ. Սահմանադրական դատարանը քննարկելով խնդրո առարկա հարցի սահմանադրականությունը արձանագրել է, որ քննիչի և հետաքննիչի հարցաքննությունը, քրեական դատավարության օրենսդրության այլ նորմերի հետ համակարգային կապի մեջ դիտարկելով, հիմք չեն տալիս արձանագրել, որ դատարանը իրավունք ունի հարցաքննել հետաքննիչին և քննիչին՝ կասկածյալի կամ մեղադրյալի կողմից մինչդատական վարույթի ընթացքում տրված ցուցմունքների բովանդակության վերաբերյալ, և հնարավորություն չեն ընձեռում վերարտադրել այդ ցուցմունքների բովանդակությունը [4]:

Իր հերթին Ռ.Գ. Գերագույն դատարանը արձանագրել է, որ տեղամասային տեսուչը հարցաքննվել է որպես վկա այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել հարցման ենթարկվածի խոսքերից, սակայն նրան գործի հանգամանքների մասին պարզաբանումներ ստանալու նպատակով կանչել են դատարան որպես վկա հարցաքննվելու: Դատարանը նշված հարցաքննության արդյունքը ճանաչել է անթույլատրելի [3]:

Վ. Չաժիցկին և Լ. Բաշկատովը թույլատրելի էին համարում քննիչի և օպերատիվ աշխատակցի հարցաքննությունը բացառապես այն դեպքերում, երբ վերջիններս ականատես էին լինում հանցանքի կատարմանը [6, էջեր 21-22]: Վ. Միրոնովը և Վ. Շիմանովսկին քննիչի և օպերատիվ աշխատակցի հարցաքննությունը թույլատրելի էին համարում՝ պայմանով, որ վերջիններս հետագայում չպետք է մասնակցեն գործի քննությանը [5, էջ 38]:

Համանման մոտեցում էր ամրագրված նաև ՀՀ Քրեական դատավարության 1998 թվականի օրենսգրքի մեջ, որի 86-րդ հոդվածի ուժով՝ որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել՝ դատավորը, այդ թվում նաև՝ լիազորությունները դադարեցված, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը և դատական նիստի քարտուղարը՝ կապված այն քրեական գործի հետ, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները, բացառությամբ տվյալ գործի վարույթի ընթացքում թույլ տրված սխալների և չարաշահումների քննության, նոր ի հայտ եկած հանգամանքներով տվյալ գործի նորոգման կամ կորցրած վարույթի վերականգնման դեպքերի:

Այլ խոսքով, եթե մեկ այլ քրեական գործով չէր քննարկվում տվյալ վարույթի ընթացքում պաշտոնատար անձի չարաշահումների հարցը, ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձը չէր կարող որպես վկա հարցաքննվել:¹

Օրենսգիրքը գնացել է այլ ճանապարհով և նախատեսել է այն դեպքերը, երբ ապացույցը ձեռք բերած անձը կարող է հարցաքննվել որպես վկա:

Այսպես Օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ իրեղեն ապացույցի, ապացուցողական կամ վարույթային այլ գործողության արձանագրության կամ արտավարության փաստաթղթի հետազոտման արդյունքում կողմը վիճարկում է դրա թույլատրելիությունը, կամ դատարանն ունի հիմնավոր կասկածներ համապատասխան ապացույցի հավաստիության վերաբերյալ, ապա դատարանի որոշմամբ այդ ապացույցը ձեռք բերած կամ կազմած անձը

¹ Կամ գործի նորոգման կամ կորցրած վարույթի նյութերի վերականգնման վարույթի:

կարող է հարցաքննության հրավիրվել և հարցաքննվել վկայի համար սահմանված կանոններով:

Վկայակոչված հողվածը պետք է համակարգային կապի մեջ դիտարկել Օրենսգրքի 57-րդ հոդվածի հետ, որի համաձայն որպես վկա չի կարող հարցաքննվել կամ առարկաներ, փաստաթղթեր կամ այլ նյութեր ներկայացնել՝ դատավորը, նախկին դատավորը, դատախազը կամ դատական նիստի քարտուղարը՝ այն վարույթով, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները, ինչպես նաև քննիչը՝ այն վարույթով, որում նա իրականացրել է իր դատավարական լիազորությունները, բացառությամբ սույն օրենսգրքի 331-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի: Ակնհայտ է, որ օրենսդիրը ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձանց թվից թույլատրելի է համարել միայն քննիչի հարցաքննությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենսգրքի իմաստով քրեական վարույթին զուգահեռ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված ապացույցները ունեն ապացույցի նշանակություն և նկատի ունենալով, որ Օրենսգրքը բացառություն չի նախատեսել ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակիցների մասով, վերջիններս օրենքի անալոգիայի կիրառմամբ ևս կարող են հարցաքննվել քննիչի համար նախատեսված դատավարական կարգի պահպանմամբ:

Հետևապես, Օրենսգրքը չի արգելում նաև վկայի կարգավիճակով հարցաքննել հետաքննության մարմնի պետին եւ աշխատակիցներին՝ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրանց հայտնի են դարձել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կամ գաղտնի քննչական գործողություններ կատարելիս [2]:

Օրենսգրքի ձևակերպումը միաժամանակ հնարավորություն է տալիս վեր հանել դատավարական այն իրավիճակները, երբ ապացույցը ձեռք բերած անձը կարող է հարցաքննվել: Օրենսգրքը վկայի կարգավիճակով քննիչի հարցաքննությունը թույլատրում է բացառապես այն դեպքում, երբ վիճարկվում է նրա ձեռք բերած իրեղեն ապացույցի, կատարած ապացուցողական կամ վարույթային այլ գործողության արձանագրության կամ արտավարույթային փաստաթղթի թույլատրելիությունը կամ հավաստիությունը եւ հարցաքննությունն անհրաժեշտ է վարույթի մասնակիցների կամ դատարանի մոտ ապացույցի թույլատրելիության կամ հավաստիության վերաբերյալ առկա հարցերին պարզաբանում տալու համար:

Նշված դատավարական կարգը չպահպանելը ծայրահեղ անբարենպաստ իրավիճակ

կարող է ստեղծել մեղադրանքի կողմի համար նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն դեպքում, երբ առկա է ապացույցների ձեռքբերման կամ ամրագրման ընթացակարգի առերևույթ խախտում, տվյալ ապացույցը չի կարող օգտագործվել առանց այն ձեռք բերած կամ կազմած անձի հարցաքննության:

Քանի որ Եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված՝ մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման իրավունքը տարածվում է նաև փաստաթղթային ապացույցների նկատմամբ, ուստի Եվրոպական Դատարանի այս դիրքորոշումն իրացնելու նպատակով Օրենսգրքը սահմանել է, որ քրեական հետապնդման մարմնի աշխատակցի կազմած փաստաթուղթը չի կարող օգտագործվել, եթե մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննել տվյալ փաստաթուղթը ձեռք բերած կամ կազմած պաշտոնատար անձին՝ դրա ձեռքբերման կամ ամրագրման կարգի ենթադրյալ խախտման վերաբերյալ [2]:

Ընդհանուր առմամբ պետք է քննարկել նաև ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձի հարցաքննության թույլատրելիության հարցը:

Ապացույցի թույլատրելիությունը որոշելիս պետք է պահպանել «չորս պատշաճների» կանոնները՝

ա. ապացույցի ձեռքբերման դատավարական կարգ,

բ. ապացույցը ձեռք բերող պատշաճ սուբյեկտ,

գ. ապացույցի ձեռքբերման պատշաճ աղբյուր,

դ. ապացույցի ձեռքբերման պատշաճ եղանակ [1, էջ 372]:

Պաշտոնատար անձի ցուցմունքների թույլատրելիությունը որոշելիս անհրաժեշտ է ղեկավարվել մի քանի կանոններով: Նախ և առաջ դատավարական կարգի իմաստով քննիչը պետք է հարցաքննվի վկայի համար սահմանված կանոններով, այդ թվում ծանուցվելով իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի մասին: Վերջին միտքը կարող է վիճահարույց թվալ, սակայն այն իր մեջ ներառում է խորքային իրավական խնդիր: Այսպես՝ ապացույցի տեխնիկական կողմի արատը, որի շուրջ հարցաքննվում է ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձը կարող է և լինել հանցավորի տիրույթում, ուստի հանցանքի կատարման մեջ սեփական անձը չներկացնելու դատավարական կանոնի իմաստով ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձը կարող է օգտվել լռելու իրավունքից կամ իր դեմ հետազայում օգտագործման ենթակա հարցերին չպատասխանելու իրավունքից: Ընդ որում, դատարանն էլ չպետք է թույլատրի այն հարցերը, որոնք վերաբերում են քննիչի հան-

ցանքի կատարման մեջ մեղադրելուն: Պետք է գիտակցել, որ քրեական վարույթի բացակայության պայմաններում նշված գործողությունը անթույլատրելի է, քանի որ կատարվի, որ առանց քրեական վարույթ նախաձեռնելու իրականացվում է մեղադրյալի հարցաքննություն:

Նման դատավարական կարգը առաջին հայացքից թվում է վիճահարույց, սակայն այս կարգի չպահպանումը կարող է հանգեցնել ապացույցի անթույլատրելիության: Դատավարական կարգի համատեքստում պետք է հիշել, որ քննիչը դատարան չի գալիս իր վերաբերյալ մեղադրանքի շուրջ հարցաքննության, այլ ապացույցի առերևույթ արատի, որը տեղ է գտել քննչական և դատավարական գործողությունները կատարելիս: Բոլոր այն դեպքերում, երբ դատարանի, հանրային մեղադրողի, պաշտպանի կամ դատավարության այլ մասնակից մոտ ձևավորվի համոզմունք, որ իրեղեն ապացույցի, ապացուցողական կամ վարույթային այլ գործողության արձանագրության կամ արտավարույթային փաստաթղթի հետազոտման արդյունքում ի հայտ են եկել հանցավոր գործողություններ, ապա պետք է ներկայացնել ոչ թե ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձի հարցաքննության միջնորդություն, այլ հանցագործության վերաբերյալ պատշաճ հարդրում:

Ապացույցի պատշաճ սուբյեկտի առումով անհրաժեշտ է արձանագրել, որ ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձին հարցաքննելը վարույթն իրականացնող դատարանի մենաշնորհային իրավագործությունն է, քանի որ բացառված է նշված դատավարական կարգի կիրառումը գործի քննության այլ փուլերում (օրինակ՝ մինչդատական վարույթի ընթացքում): Վերջինս ենթադրում է գործի ըստ էության քննության փուլում ի հայտ եկած առերևույթ խնդիրներ, որով պայմանավորված պաշտոնատար անձը կանչվում է հարցաքննության:

Իրենից որոշակի տեսական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք պաշտոնատար անձի հարցաքննությունը կիրառելի է դատական երաշխիքների վարույթի ընթացքում:

Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական երաշխիքների վարույթներով դատարանը հանդիսանում է քրեական վարույթն իրականացնող մարմին:

Պաշտոնատար անձի հարցաքննությունը կանոնակարգող նորմը ներառված է Օրենսգրքի 43-րդ գլխի 331-րդ հոդվածում: Գլխի և վկայակոչված հոդվածի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ «Հիմնական դատախոսներ» գլխի նկատմամբ կիրառելի չէ *mutatis mutandis* (վերաբերելի մասով կիրառություն) իրավական գործիքը: Հետևապես, կասկածի

տակ չդնելով դատական երաշխիքների վարույթի ընթացքում դատարանի որպես վարույթն իրականացնող մարմին լինելը՝ պետք է արձանագրել, որ դատական երաշխիքների վարույթի ընթացքում, ընդհանուր առմամբ, պաշտոնատար անձին հարցաքննելը չի լինի թույլատրելի՝ իրավական պատվիրանի բացակայությամբ պայմանավորված: Մյուս կողմից, սակայն, դա անելու ուղիղ արգելք էլ չկա, ինչը ենթադրում է, որ օրենքի անայոգիայի տրամաբանության մեջ նշված ինստիտուտը կարող է կիրառվել նաև դատական երաշխիքների վարույթներում:

Ապացույցի պատշաճ աղբյուրի համատեքստում պետք է նշել, որ Օրենսգիրքը պահանջում է բացառապես այն պաշտոնատար անձի հարցաքննության, ով (ովքեր) ձեռք է (են) բերել ապացույցը կամ կազմել այն: Օրենսգիրքը տարանջատում է երկու խումբ անձանց՝

- ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձ և
- ապացույցի ամրագրումը իրականացրած պաշտոնատար անձ:

Անհրաժեշտ է բաժանարար գծեր անցկացնել ապացույցը ձեռք բերած և այն ամրագրած պաշտոնատար անձանց միջև: Իսկ մինչ այդ, պետք է հստակ արձանագրել, որ բոլոր այն դեպքերում երբ ապացույցը ձեռք բերած և այն ամրագրած պաշտոնատար անձինք չեն համընկնում, հարցաքննության կարող են կանչվել երկուսն էլ՝ կաժված այն հանգամանքից, թե ապացույցի որ ասպեկտն է առաջացրել հավաստիության հիմնավոր կասկած: Եթե խնդիրը կապված է ապացույցի ձեռք բերման հետ, ապա հարցաքննության պետք է կանչել ապացույցը ձեռք բերողին, իսկ եթե խնդիրը պայմանավորված է ապացույցի ամրագրման հետ ապա այն ամրագրողին: Պետք է անթույլատրելի համարել այն դեպքերը, երբ ապացույցի ամրագրման խնդրի պարզաբանման համար հարցաքննության կանչվի այն ձեռք բերողը:

Անդրադառնանք այն իրավական հարցադրմանը, թե Օրենսգիրքը որ պաշտոնատար անձանց է թույլատրելի համարում հարցաքննել: Նշված հարցի պատասխանը քողարկված է քննարկվող ինստիտուտի էության մեջ: Վերջինս կայանում է նրանում, որ քրեական դատավարության ընթացքում ձեռք են բերվում և ամրագրվում ապացույցներ: Չեն կարող բացառվել այն դեպքերը, երբ այդ գործընթացում տեղի ունենան դատավարական սխալներ, որոնք գործն ըստ էության լուծելու փուլում ենթակա են ստուգման: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ դատավորները և դատախազներն էլ են օժտված ապացույցներ ձեռք բերելու որոշակի իրավասությամբ, սակայն նրանց մասով առկա է հարցաքննման օրենսդրական արգելք, հետևաբար հետազոտվող դատավարական ռեժիմը կիրա-

ռելի է բացառապես հետաքննության աշխատակցին և քննիչին:

Քննարկվող հարցերի առումով պետք է հետազոտման առարկա դարձնել նաև քննիչի իմունիտետի հարցերը: Որպես անկախության երաշխիք քնիչը պետք է ունենա մասնագիտական իմունիտետ, որը ենթադրում է, որ վերջինս չի կարող ներառվել իրավական գործընթացների մեջ քրեական վարույթով նախաքննություն իրականացնելու համար:¹

Քննիչին կանչելով որպես վկա վերջինս ենթարկվում է դատավարական տրանսֆորմացիայի: Մյուս կողմից էլ քննիչի իմպերատիվ անձեռնմխելիությունը վարույթը կարող է մտցնել փակուղի և ազդել ապացուցողական գործողությունների վրա: Նման պայմաններում անհրաժեշտ է մրցակցող արժեքների միջև գտնել բալանսային կետ: Որպես այդպիսին հանդես է գալիս ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձին հարցաքննության կանչելու միջնորդության և դրա արդյունքով կայացված որոշման, իսկ դատարանի նախաձեռնությամբ կանչվելու պարագայում՝ որոշման պատճառաբանված լինելը: Միջնորդության և որոշման մեջ պետք է լինեն ապացուցողական կամ վարության գործողության արձանագրության կամ արտավարության փաստաթղթի հավաստիության վերաբերյալ հիմնավոր կասկածը հիմնավորող տվյալներ, տեղեկություններ, ապացույցներ կամ այլ տվյալներ: Հիմնավոր կասկածը պետք է ունենա չափելիություն և չհիմնվի բացառապես ենթադրությունների վրա: Այլ խոսքով, պաշտոնատար անձին հարցաքննության կանչելիս անհրաժեշտ է ունենալ փաստական տվյալներ առ այն, որ ապացուցողական կամ վարության գործողության արձանագրության կամ արտավարության փաստաթղթի մեջ տեղ են գտել դատավարական արատներ:

Ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձին հարցաքննության կանչելը պաշտպանական մարտավարության տեսանկյունից ևս անհրաժեշտ է իրականացնել բացառապես ապացույցի դատավարական կարգը պահպանված լինելու տեսանկյունից: Միջնորդության բավարարման դեպքում չպետք է ապացույցը ձեռք բերած պաշտոնատար անձին հարցաքննել ապացույցի բովանդակության շուրջ, քանի որ դժվար թե գտնվի քննիչ կամ հետաքննիչ, որը հարցաքննվելիս չամրապնդի իր կողմից ձեռք բերած ապացույցի բովանդակային կողմը: Վերջիններիս հարցաքննությունը պետք է լինի գործիք դատավարության ընթացքում ապացույցի ձեռք բերման և ամրագրման դատավարական կարգի խախտումը դատական քննության ընթացքում հրամցնելը: Հակառակ պարագայում կստացվի,

որ քննիչի կամ հետաքննիչի հարցաքննությունը կրթացնի իրենց կողմից ձեռք բերած ապացույցները:

Որպես քննիչի և հետաքննիչի մասնագիտական իմունիտետի երաշխիք՝ դատարանը պարտավոր է հանել բոլոր այն հարցերը, որոնք կապված չեն ապացույցի ձևական կողմի հետ և նպատակ են հետապնդում ճնշել վերջիններիս կամ մտնել ապացույցի բովանդակության տիրույթ:

Հեղինակի կողմից առաջ քաշված թեզերը փորձարկվել են իրավակիրառ պրակտիկայում: Թիվ ԵԴ/0581/01/23 [11] քրեական գործում տեղ էր գտել հետևյալ դատավարական արատը. Ըստ գործում առկա տվյալների՝ երկու տուժողների միջև առերեսումը տեղի էր ունեցել 03:40-ին, որին նախորդել էր տուժողներից մեկի հարցաքննությունը, որը ավարտվել էր 03:40-ին: Հետագա հարցաքննության ժամանակ տուժողը հայտարարել է, որ ինքը հարցաքննվել է երեկոյան և գիշերը չի եղել քննչական մարմնում: Պաշտպանական կողմը առերես հարցաքննության արձանագրության հավաստիությունը դնելով կասկածի տակ ներկայացրել է միջնորդություն քննիչին նշված հակասությունների շուրջ հարցաքննելու վերաբերյալ այն հիմնավորմամբ, որ առկա է հիմնավոր կասկած, որ առերես հարցաքննության արձանագրությունը կազմվել է այլ ժամի, բացի այդ էլ առերեսման անհրաժեշտություն առաջանում է, երբ դատավարության մասնակիցների ցուցմունքների միջև առկա է լինում էական հակասություն: Հետագոտվող դեպքում էական հակասության տվյալը ձեռք է բերվել 03:40-ին և առերեսումն էլ է իրականացվել նույն ժամին, ինչը ապացույցի հավաստիությունը կասկածի դակ դնելու համար հիմնավոր կասկածի շեմը հաղթահարող տվյալ է: Ներկայացված միջնորդությունը մերժվել է քննիչին հարցաքննելու դատավարական արգելքով պայմանավորված: Ակնհայտ է, որ օրինակը հենց այն դասագրքայիններից է, որի դեպքում պետք է իրականացվեր քննիչի հարցաքննությունը, քանի որ հարցաքննության նպատակը ոչ թե առերեսման բովանդակությունն էր, այլ ապացույցի ձեռնարկման հետ կապված խնդիրները՝ տուժողի պնդումը, որ ինքը առերեսվել է երեկոյան ժամերին, տուժողներից մեկի գիշերը 03:40-ին քննչական մարմնում գտնվելը, հետևաբար «հակասության պլանավորված լինելը» և այլն: Այս ամենով հանդերձ, պետք է գիտակցել, որ ինստիտուտը սաղմնային վիճակում է և այս դեպքը և սույն հետազոտությունը դրա ծիլերից են:

Չուզահեռ պարագայում անձի ձերբակալումն իրականացրած և որպես դատավարական պարտական գործողություններ իրականացնելը դատական պրակտիկայում տարածում

¹ Բացառությամբ չարաշահումների քննության:

է գտնում: Այսպես՝ թիվ ԵԳ1/1877/01/23 քրեական գործով [12; 13] մեղադրանքի կողմի երեք վկաները հանդիսացել են մեղադրյալներին ձերբակալած ոստիկանները: Նշված գործով ոստիկանները դատակոչվել են որպես վկաներ: Նշվածը պետք է համարել անթույլատրելի գործողություն թե նախկին և թե ներկա Զրեական դատավարության օրենսգրքերով, քանի որ հանցափաստի հիմքով ձերբակալում իրականացրած ոստիկանը իրացնում է քրեադատավարական իր լիազորությունները, որի հիմքով կորցնում է վկա դառնալու իրավունակությունը: Բերված օրինակները լավագույնս ցուցադրում են այն կրկնակի ստանդարտները, որոնք առկա են դատաիրավական համակարգում: Չերբակալողի ցուցմունքը որպես միակ և վճռորոշ ապացույց կամ էական ապացուցողական նյութ պետք է չեզոքացնել դատաիրավական պրակտիկայում, քանի որ սա էապես խարխլում է արդարադատության նկատմամբ հարգանքը և վստահությունը [5, էջ 38]:

Մյուս կողմից էլ քննիչի կամ հետաքննության աշխատակցի դատարան կանչվելու պրակտիկայի հաճախականության բարձրացումը կարելի է համարել արդարադատական արատ: Չպետք է առաջնորդվել անհավաստիության կանխավարկածով, քանի որ քանակական առումով քննիչները առավել հավաստի են, քան անհավաստի: Սա է պատճառը, որ պաշտպանական այս գործիքը պետք է լինի բացառիկության տիրույթում:

Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում քննիչին կամ հետաքննիչին հարցաքննության կանչելու հանրային մեղադրողի միջնորդության խնդիրը: Իհարկե նմանատիպ իրավիճակը գործնականում բացառված է, քանի որ որպես կանոն դատարանում մեղադրանքը պաշտպանում է այն դատախազը, ով մինչդեռ տական վարույթի նկատմամբ իրականացրել է հսկողություն և ի պաշտոնե պատասխանատու է եղել ապացույցի որակի համար: Սակայն, ելնելով դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակից նման միջնորդությունը պետք է լինի դատախազի պարտականություն, քանի որ մեղադրանքի պաշտպանությունը պետք է լինի օրինական և եթե գործի քննության ընթացքում տեղ են գտել չարաշահումներ չպետք է լռել դրա մասին՝ անկախ վրա հասնելիք հետևանքներից: Մեղադրական տեսանկյունից քննիչի կամ հետաքննիչի հարցաքննությունը չպետք է հետապնդի կատարված քննության արատները քողարկելու, քննչական սխալները կամ անփութությունը չեզոքացնելու գործիք ծառայեն: Պետք է լինի բացառիկության հատկանիշը և ակնհայտության մակարդակի խնդիրները, որոնք չեն հատվում քրեաիրավական տիրույթի հետ:

Հոգեբանական ասպեկտում ևս քննիչի կամ հետաքննիչի հարցաքննությունը պետք է ունենա առանձնահատկություններ: Պաշտպանները դիմելով դատավարական այս հնարավորությանը հաճախ ակնկալում են, որ քննիչին դնելով անհարմար դրության մեջ կարող են շփոթեցնել վերջինիս և ստանալ ցանկալի ցուցմունքներ [9, էջեր 24-32]:

Իսկ մեղադրանքի կողմը, վստահ լինելով վերջիններիս հոգեբանական կայունության վրա ստանալ մեղադրանքը ամրապնդող ցուցմունքներ: Ով կհաջողի այս պայքարում կախված է կողմերի հոգեբանական պատրաստվածությունից, սակայն թերացում թույլ տված քննիչին հավասարակշռությունից դուրս բերելը և թերացման մեջ մերկացնող ցուցմունքների ստացումը իրագործելի խնդիր է:

Այսպիսով՝ այս ինստիտուտից օգտվելիս պաշտպանական կողմի դերակատարները պետք է ընկալեն այն պարզ տրամաբանությունը, որ խախտում թույլ տված ոչ մի քննիչ դատական նիստի ընթացքում չի ընդունելու խախտման փաստը, ուստի քննիչին կամ հետաքննիչին դատարան կանչելիս պետք է լինեն որոշակի փաստական ելակետներ, որ խախտման մեջ քննիչը կամ հետաքննիչը կմերկացվեն: Այստեղ տապալվելու դեպքում պաշտպանական կողմը կստանա ևս մեկ մեղադրական ապացույց: Բացի այդ՝ հարցաքննության կանչելը պետք է միտված լինի վեր հանել դատավարական արատները և ոչ թե լրացնեն քննությունը, իսկ որպես չարաշահման երաշխիք հանդես է գալիս միջնորդության և որոշման պատճառաբանված լինելը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, հեղ. Խումբ: Գիտ. Խմբ. Ա. Ղամբարյան, Եր.: Տիգրան Մեծ, 2016 թվական, 552 էջ:
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ. <https://rm.coe.int/new-criminal-procedure-code-guideline-/1680a72908>, 01.02.2025 թվական:
3. Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարան 2021 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 7 - UD21-10-K2 որոշումը:
4. ՌԴ Սահմանադրական դատարանի 2004 թվականի փետրվարի 6-ի թիվ N 44-Ո որոշումը:
5. **Ветрила Е.В.** ДОПРОС ДОЛЖНОСТНЫХ ЛИЦ. ВЕДУЩИХ ПРОЦЕСС. В КАЧЕСТВЕ СВИДЕТЕЛЕЙ ПОУГОЛОВНОМУ ДЕЛУ, 38 с., <https://cyberleninka.ru/article/n/dopros-dolzhnostnyh-lits-veduschih-protsess-v-kachestve>

- [svideteley-po-ugolovnomu-delu/viewer](#),
27.09.2024 թվական:
6. **Зажичкий В., Башкатов Л.** Следователь - свидетель // Советская юстиция, 1990 թվական, №6, 21-22 сс.
 7. **Калиновский К.** Уголовный процесс современных зарубежных государств. – Петрозаводск: Изд-во ПетрГУ, 2000, 45 С.
 8. **Радутная Н. В.** Коллизии норм уголовно-процессуального законодательства и возможности их преодоления в судебной практике // Комментарий российского законодательства. – М.: Изд. Рос. правовой акад. Мин-ва юстиции РФ, 1997 թ., 151 С.
 9. **Черемисина Т.В.** Прокурор возражает против ходатайства о мере пресечения. Что делать следователю // Уголовный процесс. 2022, № 11.
 10. **Чистилина Д. О.** Проблемные аспекты допроса лиц, ведущих расследование. //Известия Юго-Западного государственного университета. Серия: История и право / Proceedings of the Southwest State University. Series: History and Law. 2022 թվական 12(3), 94-105 сс.
 11. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204416506
 12. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=29554872554750647
 13. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664818

Сдана/Հանձնվել է՝ 09.02.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 14.02.2025

Принята/Ընդունվել է՝ 19.02.2025